ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.7/16896-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-244-27.04.2022-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի մայիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 584-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-244-27.04.2022-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է՝

- ներհամայնքային փոխադրումների համար մրցույթին ներկայացվող տրանսպորտային բոլոր միջոցների համար սահմանել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պարտադիր պահանջ,

- կարգավորել երթուղիների կազմակերպման ընթացքում հաշմանդամություն ունեցող ուղևորների կողմից աջակցող միջոցների տեղափոխման գործընթացը,

- հստակեցնել ավտովարորդների պարտականությունները՝ հաշմանդամություն ունեցող ուղևորների փոխադրումը կազմակերպելու ընթացքում,

- սահմանել մատչելիության նորմերի պահպանման պահանջ ավտոկայարանային գործունեության կազմակերպման համար,

- սահմանել մատչելիության պարտադիր պահանջ մինչև նախագիծն ուժի մեջ մտնելն արդեն գործող ներհամայնքային երթուղիները նոր տրանսպորտային միջոցներով համալրման կամ փոխարինման դեպքում:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է.

1. Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ներհամայնքային կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող բոլոր ավտոբուսները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ միջմարզային և ներմարզային կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության համար հարմարեցված ավտոբուսների նվազագույն քանակը սահմանում է Հայաստանի

Հանրապետության կառավարությունը:», հաշվի առնելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

2. 2-րդ հոդվածը հանել, քանի որ երթուղիներում շահագործվող տրանսպորտային միջոցները ներգրավվում են ՀՀ կառավարության 03.12.2020 թ. N 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) պահանջներին համապատասխան գնահատման արդյունքում՝ երթուղային ցանցը կազմակերպող մարմնի որոշմամբ: Հետևաբար հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տրանսպորտային միջոցների ապահովման վերաբերյալ օրենսդրության պահանջների կատարումն իրականացվում է երթուղային ցանցը կազմակերպող համապատասխան մարմինների կողմից, և երթուղու սպասարկման իրավունքից զրկման հիմք նախատեսելը համարում ենք ոչ նպատակահարմար:

3. Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 14-րդ հոդվածի 3-րդ մասում 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ավտովարորդներն անհրաժեշտության դեպքում պետք է աջակցեն հաշմանդամություն ունեցող ուղևորներին (ներառյալ ֆիզիկական աջակցությունը և տեղեկատվության տրամադրումը) օգտվելու տրանսպորտային սպասարկման իրենց իրավունքից:»:

4. 6-րդ հոդվածից հանել «և/կամ դրանց մաս կազմող սարքավորումներ» բառերը, նկատի ունենալով որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված է «աջակցող միջոցներ» հասկացությունը:

5. Նախագծին կից ներկայացված հիմնավորումից հնարավոր չէ լիարժեք գնահատել ներկայացված նախագծի արդյունավետությունը, քանի որ բացակայում են ընթացիկ իրավիճակի, խնդիրների, տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականության, կարգավորման նպատակի և ակնկալվող արդյունքի համապատասխան վերլուծությունները:

Սույն դիտողությունը բխում է այն հանգամանքից, որ նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում նախատեսվում է «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ. «Ներհամայնքային փոխադրումների համար մրցույթին ներկայացվող տրանսպորտային բոլոր միջոցները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:», սակայն նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ բացակայում են միայն ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների մրցույթին ներկայացվող տրանսպորտային

միջոցների համար նման պահանջ սահմանելու վերաբերյալ հիմնավորումները, քանի որ վերջինս կարող է սահմանափակել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները՝ հաշվի առնելով այն, որ գործող կարգավորումներով նման պահանջ նախատեսվում է միջմարզային, ներմարզային և ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների մրցույթներին ներկայացվող տրանսպորտային միջոցների համար, որոնց նվազագույն քանակը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Բացի այդ, հարկ է նկատի ունենալ, որ օբյեկտիվորեն կարող է անհնար լինել ներհամայնքային փոխադրումների մրցույթին ներկայացվող տրանսպորտային բոլոր միջոցներն ապահովել նշված պայմաններով:

Բացի այդ, անհասկանալի է նշված դրույթում «մերձհամայնքային, միջքաղաքային և միջպետական» բառերի սահմանումը, քանի որ Օրենքի 11-րդ հոդվածը ներառում է միայն միջմարզային, ներմարզային և ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների մրցույթի վերաբերյալ կարգավորումներ, որոնց վերաբերյալ նույնպես բացակայում են վերլուծություններ ու հիմնավորումներ:

Սույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 3-րդ հոդվածով սահմանվող կարգավորումների հիմնավորմանը:

Ինչ վերաբերում է նախագծին կից ներկայացված այն հիմնավորմանը, որ առկա կարգավորմամբ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման հավելվածի 14-րդ կետի 1-ին ենթակետը չեն բխում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի պահանջից, հարկ է նշել, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային համակարգի և ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների հարմարեցման ծրագրի մշակումն ու իրականացումը, ընդ որում, ծրագրով առնվազն պետք է նախատեսվեն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ավտոբուսային կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության մրցույթի անցկացման կարգում, որպես մրցութային պայման, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ավտոբուսների պարտադիր պայմանի ամրագրումը, ինչը չի ենթադրում, որ ավտոբուսային կանոնավոր

փոխադրումների մրցույթին ներկայացվող բոլոր ավտոբուսները պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ բարձրացված խնդիրների համատեքստում նախագծով առաջարկվող կարգավորումների հիմնավորվածությունը և օբյեկտիվ անհրաժեշտությունը լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն:

6. Բացի այդ՝ նախագծում առկա են օրենսդրական տեխնիկայի կանոնների առումով խմբագրման կարիք ունեցող դրույթներ, մասնավորապես՝

1) նախագծի 1-ին հոդվածի՝

ա. 1-ին մասի «21» թիվը փոխարինել «5» թվով,

բ. 1-ին մասում «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի» արտահայտությունը շարադրել մասի տեսքով, իսկ «4-րդ մասի 2-րդ նախադասությունը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ՝. «Ներհամայնքային փոխադրումների համար մրցույթին ներկայացվող տրանսպորտային բոլոր միջոցները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:»:» արտահայտությունը կետի տեսքով:

Այս առումով անհրաժեշտ է խմբագրել նաև նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը,

գ. 1-ին մասում «վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «շարադրել նոր խմբագրությամբ» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին՝ բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով: Հետևաբար՝ քննարկվող դրույթը ենթակա է վերանայման,

դ. 2-րդ մասում «Օրնքի» բառն անհրաժեշտ է փոխարինել «Օրենքի» բառով:

Սույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի համանման վրիպակներին.

2) նախագծի 3-րդ հոդվածով նախատեսված դրույթն անհրաժեշտ է սահմանել նախագծի անցումային դրույթներում՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումները, ինչպես նաև հաշվի առնելով նաև կառավարության սույն առաջարկների 1-ին կետը:

Բացի այդ, անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ ակտով են հաստատվելու մատչելիության չափորոշիչները.

3) նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում անհրաժեշտ է հստակեցնել, թե Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի որ կետում կամ որ կետից հետո է անհրաժեշտ կատարել համապատասխան լրացումը և «բովանդակությամբ» բառը փոխարինել «նախադասությամբ» բառով:

Սույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի համանման կարգավորումներին.

4) նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին, քանի որ 7-րդ մասը չի կարող ունենալ 7.1-ին մաս.

5) նախագծի 7-րդ հոդվածի՝

ա. «ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» վերնագիրն անհրաժեշտ է շարադրել որպես 7-րդ հոդվածի վերնագիր և «ԱՆՑՈՒՄԱՅԻՆ» բառից առաջ լրացնել «ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ» բառերով,

բ. 1-ին մասում անհրաժեշտ է սահմանել օրենքի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ, որը հնարավորություն կտա նախագծով սահմանվող կարգավորումների հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ կառավարությունն առաջարկում է ներկայացված օրենքի նախագիծը լրամշակել՝ հաշվի առնելով ներկայացված դիտարկումները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 584 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-244-27.04.2022-ԱՍ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.05.2022
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պ-244-27.04.2022-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը վերաշարադրել հետեւյալ բովանդակությամբ՝. «Ներհամայնքային փոխադրումների համար մրցույթին ներկայացվող տրանսպորտային բոլոր միջոցները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:»:

2. Օրնքի նույն հոդվածի 4-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝. «Մերձքաղաքային, միջքաղաքային, ներմարզային, միջմարզային եւ միջպետական փոխադրումների կազմակերպման համար մրցույթին ներկայացվող մատչելի տրանսպորտային միջոցների նվազագույն քանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2.

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասն ավելացնել նոր կետով՝. «զ.1) սույն օրենքի 13-րդ հոդվածի երկրորդի առաջին մասում նշված պայմանների խախտումները.»:

Հոդված 3.

Օրենքի 13-րդ հոդվածն ավելացնել նոր մասով հետեւյալ բովանդակությամբ. «2.1. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը մրցութային եղանակով արդեն ընտրված եւ կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաեւ օպերատորների կողմից սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին շահագործվող ներհամայնքային կանոնավոր երթուղիները 2023 թվականի հունվարի 1-ից հետո ավտոտրանսպորտային միջոցներով համալրելու կամ փոխարինելու դեպքում դրանք պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:»:

Հոդված 4.

Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ. «Փոխադրումների ընթացքում հաշմանդամություն ունեցող ուղեւորներն իրավունք ունեն օգտվելու հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված տեղերից: Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնելու ընթացքում ավտովարորդները պարտավոր են աջակցելու հաշմանդամություն ունեցող ուղեւորներին (ներառյալ ֆիզիկական աջակցությունը եւ տեղեկատվության տրամադրումը)՝ օգտվելու ուղեւորափոխադրման ընթացքում օրենքով սահմանված իրենց իրավունքներից:»:

Հոդված 5.

Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել նոր մասով հետեւյալ նախադասությամբ. «4. Ավտոկայարանային գործունեության կազմակերպումը պետք է համապատասխանի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջներին, որոնք սահմանվում են Ավտոկայարանային գործունեության կազմակերպման կարգով:»:

Հոդված 6.

Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել հետեւյալ նախադասությամբ. «7.1 Մերձքաղաքային, միջքաղաքային, ներմարզային, միջմարզային եւ միջպետական փոխադրումներից օգտվելիս

հաշմանդամություն ունեցող ուղեւորն իրավունք ունի ծանրոցից եւ ուղեբեռից բացի իր հետ անվճար փոխադրելու նաեւ աջակցող միջոցներ եւ/կամ դրանց մաս կազմող սարքավորումներ:»:

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում օրենքի ուժի մեջ մտնելու պահից մեկ տարի հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում ավտոտրանսպորտային գործունեությունը ներառական եւ մատչելի դարձնելու, հաշմանդամություն ունեցող ուղեւորների իրավունքների իրացման համար իրավական հիմքեր ստեղծելու անհրաժեշտությամբ, ինչպես նաեւ միջազգային պայմանագրերով ստանձնած Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարմամբ:

Առկա կարգավորմամբ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված է՝ մրցույթին ներկայացվող տրանսպորտային միջոցներում պետք է ներառվեն հաշմանդամություն ունեցող անձանց նստեցման եւ իջեցման համար հարմարեցված ավտոբուսներ, որոնց նվազագույն քանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Իսկ Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման հավելվածի 14-րդ կետի 1-ին ենթակետով մրցույթներին մասնակցող կազմակերպությունների համար սահմանված է տեղաշարժվելու, տեսողության եւ լսողության խնդիրներ ունեցող անձանց համար մատչելի կամ հարմարեցված ԳՕՍՏ 30478-96 ստանդարտի պահանջներին համապատասխանող ավտոբուսների առկայության պահանջ՝ ընդհանուր քանակի առնվազն 10 տոկոսի չափով:

Այս պայմանը սակայն չի բխում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավուքնների մասին» ՀՀ օրենքի պահանջից եւ բավարար չափով չի ապահովում հատկապես ներհամայնքային փոխադրումների մատչելիութունը: Ավելին, նույնիսկ վերջին տարիներին տարբեր համայնքներում ՀՀ կառավարության աջակցությամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում տրանսպորտային բարեփոխումներին, տրանսպորտային միջոցների ձեռբերմանը եւ ավտոմոբիլային պարկերի թարմացմանն ուղղված միջոցառումները չեն ստեղծում հավասար հնարավորություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Օրենքով կարգավորված չեն նաեւ հաշմանդամություն ունեցող անձանց փոխադրման, նստեցման եւ իջեցման սկզբունքները, աջակցող միջոցների տեղափոխման հարցերը, ինչպես նաեւ ավտովարորդների պարտականությունները հաշմանդամություն ունեցող ուղեւորների իրավունքների իրացման հարցում: Մատչելիության պարտադիր պայմաններ ամրագրված չեն նաեւ ավտոկայարանային գործունեության կազմակերպմանը ներկայացվող ընդհանուր պահանջներում:

Նկատի ունենալով, որ հատկապես ներհամայնքային տրանսպորտային փոխադրումներն առանցքային դեր ունեն մարդու հիմնարար իրավունքների իրացման հարցում, հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորություններ ստեղծելու եւ նրանց ներառմանը նպաստելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացում եւ փոփոխություններ կատարել «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվող իրավական ակտով նախատեսվում է փոփոխություն եւ լրացումներ կատարել «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում, մասնավորապես ՝

- ներհամայնքային փոխադրումների համար մրցույթին ներկայացվող տրանսպորտային բոլոր միջոցների համար սահմանել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պարտադիր պահանջ,

- կարգավորել երթուղիների կազմակերպման ընթացքում հաշմանդամություն ունեցող ուղեւորների կողմից աջակցող միջոցների տեղափոխման գործընթացը,

- հստակեցնել ավտովարորդների պարտականությունները՝ հաշմանդամություն ունեցող ուղեւորների փոխադրումը կազմակերպելու ընթացքում,

- սահմանել մատչելիության նորմերի պահպանման պահանջ ավտոկայարանային գործունեության կազմակերպման համար,

- սահմանել մատչելիության պարտադիր պահանջ մինչեւ սույն օրենքի ուժի մտնելն արդեն գործող ներհամայնքային երթուղիները նոր տրանսպորտային միջոցներով համալրման կամ փոխարինման դեպքում:

3.Ակնկալվող արդյունքը

Օրենքի ընդունման արդյունքում կստեղծվեն իրավական հիմքեր ներհամայնքային երթուղիների համար մրցույթին ներկայացվող տրանսպորտային միջոցների մատչելիությունն ապահովելու համար, կամրագրվեն նմանատիպ պահանջներ ավտոկայարանային գործունեության կազմակերպման դեպքում, կհստակեցվեն հաշմանդամություն ունեցող ուղեւորների փոխադրման, աջակցող միջոցների տեղափոխման գործընթացները, ավտովարորդների պարտականությունները՝ հաշմանդամություն ունեցող ուղեւորների փոխադրումը կազմակերպելու ընթացքում: